

## ՀԱԳՄՉ 06.10

Առաջին նախնական հրատարակություն  
1 հոկտեմբերի 2008թ.  
Ներառում է փոփոխություններ

---

## Վերապատրաստման կառավարում

---

---

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. Փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Նախազգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>:

## Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
Նյու Յորք, NY 10017  
ԱՄՆ

Էլ-փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

## Բովանդակություն

Բովանդակություն .....	iv
Նախաբան .....	vi
Վերապատրաստման կառավարում .....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմինները, սահմանումները և հապավումները .....	1
4. Վերապատրաստում՝ հիմնական պահանջները .....	2
5. Վերապատրաստման կարիքների վերլուծություն (ՎԿՎ) .....	3
6. Վերապատրաստման նախագծում և իրականացում.....	4
6.1. Ընդհանուր դրույթներ .....	4
6.2. Վերապատրաստման տեսակներ .....	5
6.2.1. Ընդհանուր .....	5
6.2.2. ԳՎ .....	5
6.2.3. Ֆորմալ վերապատրաստում.....	5
6.3. Վերապատրաստման, դասաբաժինների և դասերի խնդիրներ .....	6
6.4. Դասաբաժնի ծրագիր .....	7
6.5. Վերապատրաստման թեստ.....	7
7. Վերապատրաստման կառավարման փաթեթ (ՎԿՓ) .....	8
8. Վերապատրաստող անձնակազմի որակավորում և փորձ.....	8
9. Վերապատրաստման մոնիտորինգ .....	9
9.1. Ընդհանուր դրույթներ .....	9
9.2. Ներքին մոնիտորինգ .....	9
9.3. Արտաքին մոնիտորինգ .....	9
10. Վերապատրաստման վարչական գործընթացներ .....	10
10.1. Ընդհանուր դրույթներ .....	10
10.2. Վերապատրաստվողներին ընտրելու չափորոշիչներ .....	11
10.3. Վերապատրաստման սարքավորումներ և նյութեր .....	11
10.4. Վերապատրաստման նպատակով ականներ և ՊՊՄ .....	11
10.5. Վերապատրաստման շենքեր և տարածքներ .....	11
10.6. Վերապատրաստման գրանցումների կառավարում.....	12
11. Պարտավորություններ .....	12
11.1. ՄԱԿ .....	12
11.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ).....	12
11.3. Ականազերծող կազմակերպություններ .....	12
11.4. Դոնորներ.....	13
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	14
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	15
Հավելված Գ (Տեղեկատվական) Բազային ականազերծման վերապատրաստման և դասաբաժինների խնդիրների օրինակ .....	16
Հավելված Դ (Տեղեկատվական) Դասաբաժնի պլանի օրինակ՝ աշխատեցնել ներկայիս մետաղորսիչ սարքերը.....	18
Հավելված Ե.....	20
(Տեղեկատվական) Վերապատրաստման թեստավորման պլանի օրինակ .....	20

---

Փոփոխությունների արձանագրություն .....	22
--	----

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

## Ներածություն

Համարյա բոլոր ականագերծման ծրագրերում օպերացիոն կամ կառավարման հանձնարարությունների համար կլինի անձնակազմի վերապատրաստման պահանջ: Վերապատրաստումը կարելի է իրականացնել երկու ձևով՝ ոչ ֆորմալ կամ փաստացի աշխատելու միջոցով և ֆորմալ: Աշխատելու միջոցով իրականացվող վերապատրաստումը սովորաբար իրականացվում է անձնակազմի փոքրաթիվ անդամների հետ կամ ամեն անգամ ընտրելով մեկ հոգու: Այն շարունակական լինելու նպատակ ունի և «ցպահանջ» դեպքերում ապահովվում է ավելի ավագ անձնակազմի կողմից: Ֆորմալ վերապատրաստումը սովորաբար տրամադրվում է անձանց մի խմբի ժամանակի որոշակի հատվածում՝ վերապատրաստման կուրսի կամ սեմինարի տեսքով: Ֆորմալ վերապատրաստումը կարող է ուղղակիորեն իրականացվել հենց ականագերծող կազմակերպությունների, ԱԳԱՄ-ի կողմից հիմնադրված կենտրոնացված վերապատրաստման հիմնարկի կամ միջազգային վերապատրաստման հաստատությունների կամ փորձագետների կողմից:

Վերապատրաստումը պետք է մշակվի ի պատասխան հաստատված կարիքների, և առաջին հերթին պետք է իրականացվի վերապատրաստման կարիքների վերլուծություն: Այնուհետև վերապատրաստումը պետք է իրականացվի որակավորված մասնագետների կողմից: Բարձրորակ վերապատրաստում ապահովելու նպատակով ԱԳԱՄ-ը պետք է մշակի վերապատրաստման կառավարման ազգային ուղեցույցեր՝ վերապատրաստման առաջընթացը և դրա ապահովումը հսկելու և արդյունքները գնահատելու համար: ԱԳԱՄ-ը ազգային չափորոշիչներում պետք է նշի վերապատրաստման կառավարման պահանջները:

Նշում՝ Երբեմն փաստացի աշխատելու միջոցով իրականացվող վերապատրաստումը կարող է իրականացվել որպես ֆորմալ վերապատրաստում:

## Վերապատրաստման կառավարում

### 1. Ծավալ

Այս չափորոշիչը ուղեցույցեր է ապահովում ականագերծող անձնակազմի համար անցկացվող վերապատրաստման կառավարման համար: Այն հատկապես վերաբերում է ականագերծող կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստմանը այն անձանց համար, ովքեր իրականացնելու են ականների վտանգի վերաբերյալ կրթական ծրագրեր, պայթուցիկ զինամթերքների վնասագերծում (ՊԶՎ) և այնպիսի գործողություններ, որոնք ներառում են ուսումնասիրություն, նշագծում, մաքրագերծում, մոնիտորինգ և գնահատում, ինչպես նաև որակի հսկում:

Այն չի ընդգրկում այլ տիպի վերապատրաստում, որը ներառում է տուժածներին օգնություն տրամադրելու գործողություններ, և վարչական, կազմակերպչական ու ֆինանսների հետ կապված հարցեր, թեև նմանատիպ սկզբունքներ կարող են կիրառվել:

Սույն չափորոշիչը մանրամասնորեն չի անդրադառնում ոչ ֆորմալ վերապատրաստմանը:

### 2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ փաստաթղթերը կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

### 3. Տերմինները, սահմանումները և հապավումները

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը:

«Ականազերծող կազմակերպություն» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետություն, ՀԿ կամ առևտրային կազմակերպություն), որը պատասխանատու է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: Ականազերծող կազմակերպությունը կարող է լինել գլխավոր կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

#### **4. Վերապատրաստում՝ հիմնական պահանջները**

ԱԳԱՄ-ը իր ծրագրի շրջանակներում պետք է ընթացակարգեր սահմանի վերապատրաստման կառավարման համար: Նման ընթացակարգերը պետք է շարադրված լինեն ազգային չափորոշիչներում և ներառեն հետևյալ պահանջները.

- ա) Վերապատրաստումը պետք է հիմնվի վերապատրաստման կարիքների վերլուծության վրա (ՎԿՎ)
- բ) Վերապատրաստումը պետք է ներառվի ռազմավարական և տարեկան պլանում որպես ազգային կարողությունների զարգացման մաս
- գ) Վերապատրաստումը պետք է պատշաճ կերպով նախագծվի և մշակվի և առաջնորդվի վերապատրաստման կառավարման փաթեթներով (ՎԿՓ);
- դ) Եթե վերապատրաստումը չի իրականացվում կենտրոնացված կերպով ԱԳԱՄ-ի վերահսկողության ներքո, ականազերծող կազմակերպությունները պետք է նախքան որևէ վերապատրաստում իրականացնելը ԱԳԱՄ-ի հաստատմանը հանձնեն իրենց ՎԿՓ-ները:

Նշում՝ Հավատարմագրման գործընթացի ժամանակ, ականազերծող կազմակերպությունները պետք է հանձնեն իրենց վերապատրաստման կառավարման սխեմաների մանրամասները և աշխատակիցների հմտությունների զարգացման ծրագրերը: Տե՛ս ՀԱԳՄՉ 07.30 մանրամասների համար:

- ե) վերապատրաստումը պետք է իրականացվի միայն ունակ մասնագետների կողմից: ԱԳԱՄ-ը պետք է մասնավորեցնի, թե նրանց որակավորումն ինչպես պետք է ստուգվի
- զ) պետք է իրականացվի վերապատրաստման գնահատում և փորձարկում
- է) վերապատրաստումը պետք է իրականացվի ներքին և արտաքին վերահսկողության ներքո
- ը) պետք է մշակվեն վերապատրաստման կառավարման գործընթացներ:

## 5. Վերապատրաստման կարիքների վերլուծություն (ՎԿՎ)

Ականազերծող անձնակազմի համար իրականացվող վերապատրաստման հիմնական նպատակն է ձեռք բերել հիմնական գիտելիքներ կամ բարելավել եղած գիտելիքները, հմտությունները և ունակությունները՝ պատշաճ կերպով իրականացնելու իրենց պարտականություններն ու պատասխանատվությունները: Իդեալական հանգամանքների դեպքում ականազերծող կազմակերպությունները պետք է արդեն տեղյակ լինեն իրենց կողմից ստանձնված վերապատրաստման կարիքի մասին: Երբ այն հայտնի չէ, ՎԿՎ պետք է իրականացվի նախքան որևէ վերապատրաստում մշակելն ու իրականացնելը: ՎԿՎ-ն պետք է օգնի հետևյալում.

- ա) հաստատի՝ արդյոք վերապատրաստման կարիք կա
- բ) որոշի վերապատրաստման բովանդակությունն ու ծավալը
- գ) սահմանի վերապատրաստման ցանկալի արդյունքները
- դ) հիմք ստեղծի առաջընթացը չափելու համար
- ե) որոշի կազմակերպությունում առկա վատ աշխատանքի պատճառները
- զ) ձեռք բերի դեկավարության աջակցությունը

ՎԿՎ իրականացնելու համար պետք է օգտագործվեն մի շարք մեթոդներ, որոնցից են հարցաթերթիկները, թիրախ խմբի քննարկումները, հարցազրույցները, աշխատանքի իրականացման վերլուծությունը:

Վերապատրաստման կարիքը պետք է հիմնված լինի հավանական վերապատրաստվողների փաստացի պահանջների վրա, և այն կազմակերպության համատեքստի, որում նրանք պետք է կիրառեն իրենց սովորածը: «Փաստացի պահանջները» վերաբերում են Գիտելիքներին, հմտություններին և մոտեցումներին (ԳՀՄ), որոնք անհրաժեշտ են աշխատանքն իրականացնելու համար: «Կազմակերպության համատեքստը» մատնանշում է կազմակերպության այն ասպեկտները, որոնք սահմանափակում են աշխատակազմի անհատ անդամների գործունեությունը, ինչպես օրինակ վատ գրված պայմանագրերը կամ դեկավարման ջղի բացակայությունը: ՎԿՎ օգնում է վերլուծել, թե անհատ աշխատողի գործունեության որ հարցերն են պայմանավորված ԳՀՄ բացակայությամբ և որոնք են բխում կազմակերպության համատեքստի սահմանափակումներից: Նրանք, որոնք աշխատողի համապատասխան ԳՀՄ բացակայության պատճառ են, կարող են վերացվել վերապատրաստման միջոցով, մինչդեռ այն հարցերը, որոնք կազմակերպության համատեքստի սահմանափակումների արդյունք են, պետք է լուծվեն այլ միջոցների հաշվին: Առանց ՎԿՎ կազմակերպությունը կարող է հակված լինել վերապատրաստել իր անձնակազմի անդամներին՝ առանց գիտակցելու, որ դրական գործունեությունը սահմանափակող իրական խնդիրը գտնվում է կազմակերպության համատեքստում:

ՎԿՎ պետք է հետևի հետևյալ քայլերին.

### Քայլ 1. Կազմակերպության վերլուծություն

Այս վերլուծությունը պետք է նկատի ունենա կազմակերպության գործունեության հիմնական հարցերը և այն ակնկալվող օգուտը, որ վերապատրաստումը կտա: Մույն վերլուծությունից պետք է հստակ դառնա, թե որ հարցերը կարող են լուծվել վերապատրաստման միջոցով, և որոնք են պահանջում փոփոխություն կազմակերպության գործելակերպի մեջ, որոնցից են ռազմավարության փոփոխությունները, անձնակազմով համալրելը կամ կառավարման համակարգերը:

Եթե ՎԿՎ ցույց է տալիս, որ այդ գործունեությունը սահմանափակվում է կազմակերպության ներսում առկա խնդիրների պատճառով, կազմակերպությունը պետք է պլան մշակի այդ հարցերը լուծելու համար:

Եթե ՎԿՎ ցույց տա, որ վերապատրաստումը *կարող է* նպաստել կազմակերպության աշխատանքը բարելավելուն, ապա կազմակերպության վերլուծությունը պետք է մատնանշի, թե որ պաշտոնները վերապատրաստման կարիք ունեն:

**Քայլ 2. Հանձնարարության վերլուծություն. գործունեության թերությունների հայտնաբերում**

Սույն վերլուծությունը հմտությունների աուդիտ է և պետք է ներառի հետևյալը.

- ա) Յուրաքանչյուր վերանայվող պաշտոնի պարտականությունների մանրամասն քննում
- բ) Առանձին հանձնարարությունների սահմանումը, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր պաշտոնի պարտականություններն իրականացնելու համար
- գ) Յուրաքանչյուր հանձնարարության բավարար կատարման համար անհրաժեշտ ԳՀՄ սահմանումը
- դ) ԳՀՄ ներկա մակարդակի որոշումը անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար, որոնց աշխատանքի կատարողականությունը պետք է բարելավել, այն է՝ «ինչ է անում այն անձը ներկայումս» (հանձնարարության փաստացի կատարումը և դրա հետ կապված ԳՀՄ):

Հանձնարարությունների վերլուծության արդյունքը պետք է լինի հանձնարարությունների և դրանց հետ կապված ԳՀՄ ամփոփումը, որը պահանջվում է անձնակազմի անդամից՝ տվյալ պաշտոնի պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու համար:

**Քայլ 3. Վերապատրաստման կարիքների սահմանում**

Վերապատրաստման կարիքները պետք է ձևակերպվեն ելնելով «ինչ է անում այդ անձը ներկայումս» և «ինչ պետք է անի իրականում» տարբերությունից (այն է՝ աշխատանքի կատարման պահանջված որակը):

Որպես արդյունք վերհանված կարիքները կարող են բաժանվել ավելի լայն՝ շատ հարցեր ներառող վերապատրաստման կարիքների, օրինակ՝ «ինչպես իրականացնել ականազերծման ծրագրեր», բայց դրանք պետք է նաև բաժանվեն ավելի փոքր հատվածների, որոնցից են «ինչպես ապահով կերպով աշխատեցնել ժամանակակից մետաղորսիչ սարքերը» և «ինչպես իրականացնել համայնքի քարտեզագրում»:

Եթե ՎԿՎ-ն ավարտվել է և վերապատրաստումը համապատասխանում է անձնակազմի աշխատանքի հետ կապված հարցերին, ապա վերապատրաստումը կնախագծվի և կկազմակերպվի:

**6. Վերապատրաստման նախագծում և իրականացում**

**6.1. Ընդհանուր դրույթներ**

- ա) Որոշել, թե որ տեսակի վերապատրաստումը կլրացնի բացերը
- բ) Սահմանել վերապատրաստման խնդիրները, դասաբաժինները և եթե հնարավոր է, դասերը

- զ) Նախագծել դասաբաժինների պլանը
- ղ) Որոշել վերապատրաստումը փորձարկելու և գնահատելու մեթոդը:

## **6.2. Վերապատրաստման տեսակներ**

### **6.2.1. Ընդհանուր**

Ականազերծման համատեքստում, վերապատրաստումը կարող է դասակարգվել որպես գործնական վերապատրաստում (ԳՎ) կամ ֆորմալ վերապատրաստում՝ լինելով բազային, օժանդակ կամ շարունակական:

### **6.2.2. ԳՎ**

ԳՎ սովորաբար շարունակական է և վարվում է մասնագետի կողմից մինչ անձը իրականացնում է իր պարտականությունները իրենց ԳՀՄ ներկա մակարդակի համեմատ:

ԳՎ չի պահանջում վերապատրաստման նախագծման ողջ ծավալը, սակայն վերապատրաստման խնդիրները պետք է հստակ դրվեն (տե՛ս 6.4) և պետք է հնարավոր լինի գնահատել, թե արդյոք այդ խնդիրները ձեռք են բերվել:

### **6.2.3. Ֆորմալ վերապատրաստում**

#### **6.2.3.1. Ընդհանուր**

Ֆորմալ վերապատրաստումը սովորաբար իրականացվում է որոշակի ժամկետում մի խումբ անձանց համար վերապատրաստման կուրսի կամ սեմինարի ձևով և հաճախ օպերացիայի իրականացման վայրից հեռու: Ֆորմալ վերապատրաստումը պետք է նախագծվի և պատրաստվի ըստ 6.1 կետում նշված չորս հանձնարարությունների: Ֆորմալ վերապատրաստման երեք մակարդակները քննարկված են ստորև:

#### **6.2.3.2. Բազային վերապատրաստում**

Բազային վերապատրաստման նպատակն է նոր աշխատակցին տալ այն ԳՀՄ, որը պահանջվում է տվյալ անձի պաշտոնին հարիր ամեն հանձնարարություն բավարար կերպով իրականացնելու համար: Նման տիպի վերապատրաստումը կիրառելի է նոր ընդունված աշխատակցի համար, այն է՝ հիմնական ականազերծման դասընթաց սկսնակ ականազերծողների համար:

#### **6.2.3.3. Օժանդակ վերապատրաստում**

Օժանդակ վերապատրաստման նպատակն է թարմացնել կամ պահպանել ԳՀՄ մակարդակը ժամանակի ընթացքում: Այս տիպի վերապատրաստումը պետք է կիրառվի կանոնավոր կերպով՝ որոշ ժամանակ հանձնարարություններ չկատարելու պարագայում կամ երբ նշաններ կան, որ ԳՀՄ մակարդակն ընկել է: Այս նշանները կարող են բնորոշվել կանոնավոր մոնիտորինգի և ստուգման, ինչպես նաև որպես դեպքի արդյունք:

#### **6.2.3.4. Շարունակական վերապատրաստում**

Շարունակական վերապատրաստումն այն վերապատրաստումն է, որը հիմնվում է նախկին վերապատրաստումների վրա և ապահովում է հավելյալ ԳՀՄ: Այս տիպի վերապատրաստումը կիրառելի է, երբ կան փոփոխություններ աշխատանքի մեթոդների, գործընթացների և սարքավորումների առումով կամ երբ անձնակազմին տրվում են հավելյալ հմտություններ՝ իրենց աշխատանքում առաջխաղացում ունենալու համար:

Այս կամ այն տիպի վերապատրաստում ընտրելու որոշումը պետք է կայացվի ելնելով վերապատրաստման կարիքներից, ինչպես նաև հաշվի առնի.

- ա) Պաշտոնը, հանձնարարությունները և դրա հետ կապված ԳՀՄ;
- բ) վերապատրաստում անցնողների քանակը;
- գ) մարդկային (հրահանգիչներ), ֆիզիկական (սարքավորումներ և հարմարություններ) և ֆինանսական ռեսուրսների առկայությունը, որոնք անհրաժեշտ են վերապատրաստումը նախագծելու, պատրաստելու և իրականացնելու համար:

### **6.3. Վերապատրաստման, դասաբաժինների և դասերի խնդիրներ**

Վերապատրաստումը պետք է ներառի չափելի և հստակ խնդիրներ: Վերապատրաստման խնդիրը հակիրճ, պարզ նախադասություն է այն մասին, թե ինչ պետք է վերապատրաստվողն իմանա կամ ի վիճակի լինի անել դրա ավարտից հետո: Խնդիրներն օգնում են ուղղորդել վերապատրաստման բովանդակության և մեթոդների նախագծումը և ապահովել միջոցներ, ըստ որի վերապատրաստման արդյունքները կարելի կլինի համեմատել: Վերապատրաստման խնդիրները պետք է հիմնվեն դրա կարիքի վրա, որն առաջ է քաշվում ՎԿՎ-ի կողմից և նկարագրեն այն ԳՀՄ, որը վերապատրաստվողը ձեռք կբերի վերապատրաստման արդյունքում:

Յուրաքանչյուր վերապատրաստման խնդիր պետք է այնուհետև բաժանվի մի շարք հստակ և չափելի դասաբաժնային խնդիրների: Դասաբաժինների խնդիրները նկարագրում են այն հատուկ ԳՀՄ, որը պետք է ձեռք բերվի վերապատրաստվողների կողմից մեկ դասաբաժնի ընթացքում: Օրինակ՝ «օժանդակել ականների/ՊՊՄ համայնքային քարտեզագրմանը ականների խնդիր ունեցող համայնքների համար» վերապատրաստման խնդրի համար երեք դասաբաժնային խնդիր կարող են ձևակերպվել՝ մեկը կապված գիտելիքի, մյուսը՝ հմտությունների և երրորդը՝ մոտեցման հետ: Դասաբաժինը չպետք է տևի ավելի, քան կես օր և պետք է բաղկացած լինի մի քանի դասերից:

Մոտեցման խնդիրները պետք է դրվեն այն դեպքում, երբ վերապատրաստվողները կարիք ունեն ենթարկվել վարքի որոշակի ստանդարտների, ինչպես օրինակ անվտանգության խնդիրը: Մոտեցման խնդիրները չեն կարող փորձարկվել. դրանք միայն կարող են գնահատվել: Վերապատրաստման այնպիսի թեմայի համար, ինչպիսին է անվտանգությունը, պետք է լինի երկու փոխլրացնող խնդիր: Առաջինը պետք է ներառի անվտանգության պահանջների ընկալումը, որը կարող է ստուգվել, սակայն երկրորդը՝ մոտեցման խնդիրը, կներառի անվտանգության հանդեպ մոտեցման «դրսևորում»: Կարող են լինել որոշ հատուկ ցուցիչներ «անվտանգ» ու «ոչ անվտանգ» վարքագծի համար և չափորոշիչներ վերապատրաստումն անցնելու կամ չանցնելու մասին, սակայն գնահատումը կներառի վերապատրաստվողների դիտարկում ողջ ընթացքում՝ համոզվելու, որ նրանք իրոք ցուցաբերում են անվտանգ վարքագիծ: Տես հավելված Գ-ն բազային ականագերծման վերապատրաստման հանձնարարությունների օրինակների, վերապատրաստման և դասաբաժնային խնդիրների համար:

Վերապատրաստման և դասաբաժնի խնդիրներից բացի, կարող են մշակվել այնպիսի նպատակներ, որոնք կենտրոնանում են այս կամ այն ԳՀՄ վրա: Այս նպատակները ևս պետք է հավասարաչափ հստակ և չափելի լինեն և նրանց նախագծումը պետք է ենթարկվի նույն կանոններին, ինչ որ վերապատրաստման և դասաբաժնի խնդիրները:

Նպատակները պետք է համարակալվեն տրամաբանական հերթականությամբ՝ հաշվի առնելով, թե որ խնդիրն է նախապայման հանդիսանում մյուսի համար: Հավելված Գ-ն ներառում է նման բանական համարակալման համակարգի օրինակ:

#### **6.4. Դասաբաժնի ծրագիր**

Վերապատրաստումը պետք է բաժանվի մի շարք դասաբաժինների: Բոլոր դասաբաժինները պետք է մշակվեն հստակ ծրագրերով: Այդ ծրագրերն ապահովում են յուրաքանչյուր դասաբաժնի ընդհանուր նկարագիրը: Այդ պատճառով վերապատրաստումը պետք է ուղեկցվի դասաբաժինների ծրագրերի հավաքածուով, որոնք դասավորված են այն կարգով, որով դասը պետք է տրվի: Հաջորդականությունը պետք է բանական լինի՝ հավաստիանալու, որ այն դասաբաժինները, որոնք նախապայման են հանդիսանում մյուսների համար, դասավորված են համապատասխանաբար:

Դասաբաժնային պլաններն ապահովում են այն մանրամասների մեծ մասը, որոնք պահանջվում են վերապատրաստումն իրականացնելու համար և հնարավորություն տալիս ուսուցիչներին պատրաստել և բավարար կերպով մատուցել յուրաքանչյուր դասաբաժինը: Հետևաբար, ամբողջ վերապատրաստումն ավելի արդյունավետ կլինի: Դասաբաժնային պլանի մի օրինակ ներառված է հավելված Դ-ում:

#### **6.5. Վերապատրաստման թեստ**

Վերապատրաստման համար նախապատրաստվելու վերջին քայլը պետք է լինի վերապատրաստման թեստերի մշակումը: Այդ թեստերը պետք է կիրառվեն վերապատրաստման վերջում, երբ դրա խնդիրներն արդեն իրականացված կլինեն:

Գործնական թեստերի կամ գնահատականների համար պայմանները պետք է լինեն անվտանգ և այնքան մոտ իրական պայմաններին, ինչքան մասնակիցը կարող է ակնկալել իրական աշխատանքում:

Վերապատրաստման խնդրի մշակման վերջին մասը արդյունքների ձևակերպումն է, որոնք նկարագրում են, թե վերապատրաստվողն ինչպես կարող է ցույց տալ, որ վերապատրաստումը կամ դրա նպատակները նվաճված են: Արդյունքների ձևակերպումը պարզապես կարող է լինել անցնողիկ գնահատական գրավոր թեստի համար կամ գործնական թեստի հաջող իրականացում: Ականազերծման վերապատրաստման մեջ հաճախ անվտանգությունը շատ էական է:

Գնահատման համար պայմանները և արդյունքների ձևակերպումները պետք է թվարկված լինեն վերապատրաստման թեստային պլանում: Ուսուցիչները կարող են նշումներ անել այս ձևերում վարչական կամ այլ մանրամասների մասին: Նման պլանի օրինակ կարելի է գտնել Հավելված Ե-ում:

Հոդված պետք է լինի վերաթեստավորել այն մասնակիցներին, ովքեր չեն անցել առաջին թեստը:

Վերապատրաստման թեստերի և հնարավոր կրկնաթեստերի մանրամասները պետք է ներառվեն Վերապատրաստման վարչական գործընթացների մեջ: Եթե վերապատրաստվողը չի կարողանում հանձնել առաջին թեստը, նրանց պետք է տրամադրել կարճաժամկետ հավելյալ վերապատրաստում, այնուհետև տալ մեկ այլ թեստ հանձնելու համար: Այն փաստը, որ կա վերստին թեստ հանձնելու պայման պետք է ևս ներառվի տվյալ անձի վերապատրաստման գեկույցում: Եթե վերապատրաստվողը չի կարողանում հանձնել երկրորդ թեստը, ապա համարժեք գործողություններ պետք է ձեռնարկվեն: Սրանք կարող են ներառել աշխատավայրում ուսուցում վերապատրաստվողի համար, որից հետո կլինի մասնակցություն նույն թեմայով մեկ այլ սեմինարի:

Թեև վերապատրաստման նպատակներին հասած լինելու թեստը կարևոր է վերապատրաստման վերջում, սակայն ուսուցիչը պետք է նաև անց կացնի «համապատասխանությունը ստուգող թեստեր» ամբողջ վերապատրաստման ընթացքում: Այստեղ պետք է հավաստիանալ, որ վերապատրաստվողները հասկացել են դասը և գտնվում են պահանջվող ստանդարտի նպատակին հասնելու ճանապարհին: Այս տիպի թեստավորումը պետք է պատրաստվի հրահանգչի կողմից որպես դասի պլանավորման մաս:

## **7. Վերապատրաստման կառավարման փաթեթ (ՎԿՓ)**

ՎԿՓ-ն փաստաթղթերի ժողովածու է, որոնք տրամադրում են ողջ անհրաժեշտ տեղեկությունները ֆորմալ վերապատրաստում անցկացնելու համար: ԱԳԱՄ-ը պետք է սահմանի, թե իրենց ծրագրերի շրջանակներում ինչ պետք է ներառվի ՎԿՓ մեջ: Անհրաժեշտության դեպքում ՎԿՓ-ն պետք է ներառի.

- ա) Վերապատրաստման, դասաբաժնի և դասի խնդիրները;
- բ) Դասաբաժինների պլանների հավաքածուն և գրաֆիկը;
- գ) Գործունեության և պրակտիկ վարժությունների նկարագրությունը;
- դ) գործնական վարժությունները;
- ե) վերապատրաստման ստուգման միջոցները;
- զ) “power point” ծրագրով նյութերը և թերթիկները;
- է) վերապատրաստման սարքավորումների ցուցակը;
- ը) վերապատրաստմանն օժանդակող միջոցների ցուցակը;
- թ) նյութերը;
- ժ) հղումներն ու փաստաթղթերը;
- ի) վերապատրաստման վարչական ընթացակարգերը (տե՛ս 10-րդ բաժինը):

Հստակ ՎԿՓ-ն պետք է հնարավորություն տա հրահանգչին արդյունավետ կերպով պլանավորել և իրականացնել ֆորմալ վերապատրաստում և մինևույն ժամանակ պետք է մենեջերին տա հստակ պատկերացում ողջ վերապատրաստման մասին:

Երբ ականազերծող կազմակերպություններն իրենց սեփական վերապատրաստումն են իրականացնում, ՎԿՓ-ները պետք է հանձնվեն ԱԳԱՄ հաստատման համար ըստ ԱԳԱՄ-ի կողմից մշակված գործընթացների:

## **8. Վերապատրաստող անձնակազմի որակավորում և փորձ**

Ականազերծող կազմակերպությունները պետք է հավաստիանան, որ բոլոր հրահանգիչներն ունեն համապատասխան որակավորում և փորձ, որոնք անհրաժեշտ են ապահովելու արդյունավետ և տեխնիկապես բարձրորակ վերապատրաստում:

ԱԳԱՄ-ն ականազերծող կազմակերպություններից կարող է պահանջել տրամադրել հրահանգիչների ինքնակենսագրականները, մինչև վերապատրաստումը հաստատելու նպատակով, եթե հրահանգչի փորձին և որակավորմանը չեն անդրադարձել որպես հավատարմագրման գործընթացի մաս:

## **9. Վերապատրաստման մոնիտորինգ**

### **9.1. Ընդհանուր դրույթներ**

Վերապատրաստման մոնիտորինգ պետք է իրականացվի՝ հավաստիանալու, որ այն արդյունավետ է և տեխնիկապես բարձրորակ, և որ այն իրականացվում է ըստ ՎՄՊ-ի և հասնում է նախատեսված նպատակներին: Արտաքին և ներքին մոնիտորինգի պլանները պետք է ներառվեն վերապատրաստման վարչական գործընթացների մեջ:

Վերապատրաստման մոնիտորինգը կարող է արվել ներքին ձևով՝ այն անձի և/կամ կազմակերպության կողմից, որը պատասխանատու է վերապատրաստման համար, օրինակ՝ վերապատրաստում տրամադրողը, կազմակերպողը կամ վերապատրաստման մենեջերը: Այն կարող է նաև արվել արտաքին ձևով՝ այլ անձի և/կամ կազմակերպության կողմից, որը վերապատրաստում տրամադրող/կազմակերպողը չէ:

Անկախ այն բանից, թե մոնիտորինգն իրականացվում է ներքին թե արտաքին ձևով, այն պետք է.

- ա) Լինի հստակ, թե որտեղ է վերապատրաստումը բավարարում կամ չի բավարարում աշխատանքի պահանջները և ինչ պետք է ներառվի կամ փոփոխվի վերապատրաստումը բարելավելու համար
- բ) Ներառի մեկնաբանություններ վերապատրաստման լավ և վատ կետերի մասին
- գ) Ձեռք բերի ներդրում անձնակազմի շատ անդամներից, ներառյալ նախկին վերապատրաստվողներից, որոնք կարող են դիտողություններ տալ այն բանի շուրջ, թե որ հարցերում է վերապատրաստումը բավարարել կամ չի բավարարել աշխատանքի պայմաններին:

### **9.2. Ներքին մոնիտորինգ**

Վերապատրաստման ներքին մոնիտորինգը կարող է ներառել.

- ա) Վերապատրաստվողների ընկալումների գնահատում վերապատրաստման մասին ինքնազնահատման գործընթացի միջոցով և վերապատրաստման ընթացքում ստացած հետադարձ կապից,
- բ) Այց գործողությունների վայր՝ դիտելու այն պայմանները, որոնց ներքո վերապատրաստվողները կիրառում են ձեռք բերված ԳՀՄ իրենց աշխատանքում և վերադասների և աշխատակիցների հետ քննարկելու, թե ինչպես են վերապատրաստվողները կատարում իրենց պաշտոնի պահանջները: Կարող է նաև հնարավոր լինել ստանալ դիտողություններ նախկին վերապատրաստվողներից ձեռք բերված ԳՀՄ-ն լավ յուրացնելու համար:

### **9.3. Արտաքին մոնիտորինգ**

Արտաքին մոնիտորինգը կարող է ներառել.

- ա) Հարցազրույց վերապատրաստվողների հետ միջոցառման վերջում՝ այն քննարկելու նպատակով: Հարցազրույցի ժամանակ արձարծվող թեմաները ներառում են.
  - (1) Վերապատրաստման վարչարարությունը;
  - (2) Վերապատրաստման բովանդակությունը և ձեռք բերված ԳՀՄ-ի յուրացման հավանականությունը;

- (3) Հրահանգչի գիտելիքներն ու հմտությունները;
  - (4) Վերապատրաստման սարքավորումները;
  - (5) Վերապատրաստման կառույցները;
  - (6) Վերապատրաստվողների օժանդակությունը;
- բ) Հրահանգիչների՝ վարժեցնելու ընդհանուր հմտությունների և մեթոդների պարբերաբար գնահատում: Սույն գնահատումը պետք է իրականացվի կանոնավոր կերպով և պետք է նկատի ունենա, թե արդյոք հետևել են ՎՄՊ-ներին, ինչպես նաև վերապատրաստման տեսական և պրակտիկ մասերի որակը և արդյոք վերապատրաստվողները ձեռք են բերում ակնկալվող արդյունքներն ըստ դրված խնդիրների:
- գ) Այց գործողությունների վայր՝ դիտելու այն պայմանները, որոնց ներքո վերապատրաստվողները կիրառում են ձեռք բերված ԳՀՄ իրենց աշխատանքում և քննարկելու վերադասների և աշխատակիցների հետ, թե ինչպես են վերապատրաստվողները կատարում իրենց պաշտոնի պահանջները: Կարող է նաև հնարավոր լինել ձեռք բերել դիտողություններ նախկին վերապատրաստվողներից ձեռք բերված ԳՀՄ-ն լավ յուրացնելու համար:
- դ) Ինքնաբուխ դիտարկումներ վերապատրաստվողներից գրավոր կամ բանավոր,
- ե) Քննարկումներ հանդիպումների ժամանակ կամ աշխատանքային խմբերում:

Արտաքին մոնիտորինգի այցերի գտածոները պետք է պաշտոնապես ներկայացվեն հրահանգիչներին և վերապատրաստումն իրականացնող կազմակերպությանը: Այնտեղ, որտեղ ներքին և/կամ արտաքին մոնիտորինգը վերապատրաստման բացեր է հայտնաբերում, հրահանգիչը պարտավոր է անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարել: Դրանք, սակայն, չպետք է ավտոմատ կերպով իրականացվեն՝ ելնելով միայն մեկ աղբյուրից եկած տեղեկություններից:

## **10. Վերապատրաստման վարչական գործընթացներ**

### **10.1. Ընդհանուր դրույթներ**

Վերապատրաստման վարչական գործընթացները պետք է ներառվեն ՎՄՊ-ների մեջ: Սույն ընթացակարգերում ներառվող մանրամասների որոշ օրինակները հետևյալն են.

- ա) Հրահանգչի համար դրվող պահանջները, ներառյալ հատուկ գիտելիքներն ու հմտությունները;
- բ) Թարգմանչի առկայությունը;
- գ) Հարմարությունների համար դրվող պահանջները;
- դ) Տրանսպորտը, այդ թվում՝ անվտանգության ավտոմեքենաները;
- ե) Բուժօգնությունը;
- զ) Հաղորդակցությունը;
- է) Կրկնաթեստերի կառավարման գործընթացները;

- ը) Այն ուսանողների նախնական գնահատման գործընթացները, որոնք կարող են արդեն իսկ ունենալ դատում արժարծվող ԳՀՄ-ները;
- թ) Ներքին և արտաքին մոնիտորինգի պահանջները և վերապատրաստման փաստաթղթերի օրինակներ, որոնցից են ուսանողների պարտականությունների ցուցակը, սարքերի բացթողման թերթիկները և վերապատրաստման զեկույցի օրինակներ:

Որոշ դեպքերում, ԱԳԱՄ-ը կարող պահանջել, որ որոշ պահանջներ ներառվեն վարչական գործընթացներում: Որոշ օրինակներ քննարկված են ստորև:

### **10.2. Վերապատրաստվողներին ընտրելու չափորոշիչներ**

Ականազերծող կազմակերպությունները պետք է հավաստիանան, որ վերապատրաստման համար ընտրված անձնակազմի անդամները հարմար են և ունեն այն նախնական գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են յուրացնելու տվյալ վերապատրաստման ժամանակ ընկալված ԳՀՄ: Ընտրության չափորոշիչները պատրաստելիս ականազերծող կազմակերպությունները պետք է նաև համոզվեն, որ չափորոշիչները ներառում են կին վերապատրաստվողներին խրախուսելու տարրեր և խտրականություն չեն դնում հաշմանդամ անձանց հանդեպ, որոնք հարմար են և ունեն անհրաժեշտ նախապայմանները:

### **10.3. Վերապատրաստման սարքավորումներ և նյութեր**

Վերապատրաստման համար օգտագործվող նյութերն ու սարքերը պետք է հնարավորինս լինեն նույնը, ինչ որ օգտագործվում են փաստացի օպերացիաների ժամանակ:

### **10.4. Վերապատրաստման նպատակով ականներ և ՊՊՄ**

Վերապատրաստման ականների և ՊՊՄ օգտագործումը պետք է խստորեն հսկվի՝ պատահարներից/դեպքերից խուսափելու համար: Հորատիչի, հրահանգչային կամ այլ ականների և ՊՊՄ կիրառումը պետք է լինի ՀԱԳՄՉ 10.50 Անվտանգություն և աշխատանքի հիգիենա՝ պայթուցիկների պահեստավորման, տեղափոխման և կիրառման պահանջների համապատասխան:

### **10.5. Վերապատրաստման շենքեր և տարածքներ**

Վերապատրաստումը պետք է իրականացվի ապահով՝ առանց վերապատրաստվողներին, հրահանգիչներին և տեղի բնակչությանը ռիսկի կամ վնասի ենթարկելու: Եթե նախնական վերապատրաստումն իրականացվում է դաշտում, այն պետք է լինի այնպիսի տարածքներում, որոնց ապահովությունն ապացուցված է: Երբ նախնական վերապատրաստումն ավարտվել է և փորձառության բավարար մակարդակ է ապահովվել, կարող է թույլատրելի լինել շարունակել վերապատրաստումը ավելի վտանգավոր տարածքներում: Նման վերապատրաստումը պետք է իրականացվի միայն խիստ հսկողության ներքո և միայն ԱԳԱՄ-ի համաձայնությունը ձեռք բերելուց հետո:

Վերապատրաստում իրականացնելիս միշտ հատուկ ուշադրություն պետք է դարձնել տեղի բնակչության և շրջակա միջավայրի անվտանգության վրա, նամանավանդ, երբ իրական պայթուցիկներ և զինամթերք է օգտագործվում: Տե՛ս ՀԱԳՄՉ 10.70 Անվտանգություն և աշխատանքի հիգիենա. շրջակա միջավայրի պահպանությունը:

## **10.6. Վերապատրաստման գրանցումների կառավարում**

Վերապատրաստման յուրաքանչյուր դասընթացի կամ աշխատավայրում ուսուցման ժամանակահատվածի համար, գրանցումները պետք է պահվեն այն կազմակերպությունում, որն իրականացրել է վերապատրաստումը: Գրանցումները պետք է ներառեն տրամադրված վերապատրաստման մանրամասները, ստացողների անունները, ովքեր էին հրահանգիչները և ամեն մասնակցի կողմից ձեռք բերված ստանդարտները: Վերապատրաստման հաշվետվությունը պետք է նաև տրամադրվի յուրաքանչյուր մասնակցի:

Վերապատրաստում իրականացնող կազմակերպությունը պետք է գրանցումները պահի վերապատրաստման մասին ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում: Եթե կազմակերպությունը դադարում է աշխատել որևէ երկրում, վերապատրաստման գրանցումները պետք է հանձնվեն ԱԳԱՄ-ին: Վերապատրաստման գրանցումները պետք է նաև տրամադրվեն ԱԳԱՄ-ին՝ ըստ պահանջի:

## **11. Պարտավորություններ**

### **11.1. ՄԱԿ**

Այնտեղ, որտեղ ՄԱԿ-ը գործում է ԱԳԱՄ-ի անունից կամ աջակցում է ԱԳԱՄ/ԱՀ-ին ազգային հակաակնանային հնարավորությունները զարգացնելու համար, ՄԱԿ-ը պետք է անհրաժեշտության դեպքում հավաստիանա, որ կազմակերպությունները ականազերծման վերապատրաստում են իրականացնում ՎԿՊ համապատասխան և որ պլանավորված արդյունքները ձեռք են բերվում:

### **11.2. Ակնազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

ԱԳԱՄ-ը պարտավոր է.

- ա) Ստեղծել և պահել ազգային չափորոշիչները, կանոնակարգերն ու գործընթացները իրենց ծրագրի շրջանակներում վերապատրաստման կառավարման համար: Սույն գործընթացները պետք է համապատասխան լինեն ազգային և միջազգային չափորոշիչներին, կանոնակարգերին ու գործընթացներին:
- բ) Ապահովել, որ կարողությունների զարգացման ձևերը կազմեն յուրաքանչյուր ԱԳԱԿ-ի, ԱԳԱՄ-ի և ականազերծող կազմակերպության, ինչպես նաև այս կազմակերպություններից յուրաքանչյուրին աջակցություն ցուցաբերող գլխավոր տեխնիկական խորհրդատուի (ԳՏԽ) աշխատանքի էական մասը:
- գ) Հաստատել ՎԿՊ-ները և հրահանգիչների ինքնակենսագրականները նախքան վերապատրաստումը սկսելը, եթե սրանց արդեն իսկ անդրադարձ չի եղել հավատարմագրման գործընթացի ժամանակ:
- դ) Իրականացնել ականազերծող կազմակերպության կողմից իրականացված վերապատրաստման պարբերական արտաքին գնահատում՝ համոզվելու, որ վերապատրաստումը կատարվել է ըստ ՎԿՓ-ների և ազգային չափորոշիչների:

### **11.3. Ակնազերծող կազմակերպություններ**

Վերապատրաստում իրականացնող ականազերծող կազմակերպությունները պետք է՝

- ա) Հավաստիանան, որ կարողությունների զարգացման ձևերը կազմում են իրենց աշխատանքի էական մասը, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցման ժամանակ աջակցություն ցուցաբերող գլխավոր տեխնիկական խորհրդատուի (ԳՏԽ) աշխատանքի մասը:

- բ) Ստեղծեն հստակ ՎԿՓ-ներ:
- գ) Հավաստիանան, որ իրենց ՎԿՓ-ն համապատասխանում է կազմակերպության գործառնական ստանդարտ ընթացակարգերին և ազգային չափորոշիչներին:
- դ) Հավաստիանան, որ վերապատրաստումը հիմնված է ՎԿՎ-ի վրա:
- ե) Հավաստիանան, որ ֆորմալ կամ ոչ ֆորմալ վերապատրաստման գործողությունները զետեղված են կազմակերպության ռազմավարության և աշխատանքային պլանների մեջ:
- զ) Նախքան որևէ վերապատրաստում սկսելը ՎԿՊ-ները հանձնեն ԱԳԱՄ-ի հաստատմանը, եթե վերապատրաստումը չի իրականացնում կենտրոնացված կերպով ԱԳԱՄ-ի հսկողության ներքո:
- է) Իրականացնեն ներքին մոնիտորինգ և գնահատում որպես վերապատրաստման կարևոր մաս:
- ը) Պահեն գրանցումներ վերապատրաստման մասին ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում: Եթե կազմակերպությունը դադարում է աշխատել որևէ երկրում, վերապատրաստման գրանցումները պետք է հանձնվեն ԱԳԱՄ-ին:
- թ) Համոզվեն, որ վերապատրաստումն իրականացվում է որակյալ և փորձառու հրահանգիչների կողմից:

#### **11.4. Դոնորներ**

Հարկ եղած դեպքում դոնորները պետք է հավաստիանան, որ կարողությունների զարգացումը իրենց կողմից ֆինանսավորած յուրաքանչյուր կազմակերպության հիմնական գործունեությունն է և որ նրանք վերապատրաստում են իրականացնում ըստ ազգային ԱԳԱՄ-ի պահանջների:

## Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Մակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան:

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հասկացումներ;
- բ) ՀԱԳՄՉ 05.10 Տեղեկատվության կառավարում;
- գ) ՀԱԳՄՉ 07.30 Ականազերծող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում;
- դ) ՀԱԳՄՉ 08.50 Տվյալների հավաքում և կարիքների գնահատում ականների վտանգի կրթական ծրագրերի համար;
- ե) ՀԱԳՄՉ 09.30 Ազատում պայթուցիկ զինամթերքից;
- զ) ՀԱԳՄՉ 09.41 Օպերացիոն գործընթացներ ական հայտնաբերող շների համար;
- է) ՀԱԳՄՉ 09.42 Օպերացիոն փորձարկում ական հայտնաբերող շների համար;
- ը) ՀԱԳՄՉ 09.50 Մեխանիկական ականազերծում;
- թ) ՀԱԳՄՉ 10.50 S&OH Պայթուցիկների պահեստավորում, տեղափոխում և պահում;
- ժ) ՀԱԳՄՉ 10.70 S&OH Շրջակա միջավայրի պահպանություն;
- ժա) ՀԱԳՄՉ 11.10 Կուտակված զինամթերքի ոչնչացման ուղեցույց;
- ժբ) ՀԱԳՄՉ 11.20 OBOD Օպերացիաների սկզբունքներն ու գործընթացները;
- ժգ) ՀԱԳՄՉ 11.30 Ազգային ուղեցույցեր կուտակված զինամթերքի ոչնչացման համար;
- ժդ) ՀԱԳՄՉ 12.10 Ականների վտանգի կրթական ծրագրերի և նախագծերի պլանավորում:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

**Հավելված Բ**  
**(Տեղեկատվական)**  
**Տերմիններ, սահմանումներ և հապավումներ**

ՀԱԳՄՉ-ում օգտագործված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկի  
համար տե՛ս ՀԱԳՄՉ 04.10-ը:

**Հավելված Գ**  
**(Տեղեկատվական)**  
**Բազային ակնագերծման վերապատրաստման և**  
**դասաբաժինների խնդիրների օրինակ**

**Վերապատրաստման խնդիր.**

1.1. Ցուցադրել պատշաճ վերաբերմունք ականջների և ՊՊՄ անվտանգության հանդեպ

**Դասաբաժինների խնդիրներ.**

1.1.1 հասկանալ ականների և ՊՊՄ վտանգները

1.1.2 նշել ականագերծման գործողությունների անվտանգության պահանջները

**Վերապատրաստման խնդիր.**

1.2. Հասկանալ (կազմակերպության անունը) ականագերծման անհրաժեշտ միջոցների կազմակերպումը

**Դասաբաժինների խնդիրներ.**

1.2.1 Հասկանալ (կազմակերպության անունը) ականագերծման անհրաժեշտ միջոցների կազմակերպումը

**Վերապատրաստման խնդիր.**

1.3. Շարադրել ականագերծողի, բաժնի հրամանատարի և թիմի ղեկավարի պարտականությունները

**Դասաբաժինների խնդիրներ.**

1.3.1 Շարադրել ականագերծողի, բաժնի հրամանատարի և թիմի ղեկավարի պարտականությունները

1.3.2 Իրականացնել անձնական կանխարգելիչ գործողություններ վնասվածքները կանխելու համար

**Վերապատրաստման խնդիր.**

1.4. Բնորոշել ականները և ՊՊՄ

**Դասաբաժինների խնդիրներ.**

1.4.1 Շարադրել ականների և ՊՊՄ ընդհանուր վտանգները

1.4.2 Շարադրել ականները և ՊՊՄ ճանաչելու գործոնները

1.4.3 Բնորոշել հակահետևակային ականներն ու պայթուցիկները

1.4.4 Բնորոշել հակատանկային ականներն ու պայթուցիկները

1.4.5 Բնորոշել սովորական ՊՊՄ

**Վերապատրաստման խնդիր.**

1.5. Ապահով աշխատեցնել և պահել ժամանակակից մետաղորսիչ սարքերը

**Դասաբաժինների խնդիրներ.**

1.5.1 Աշխատեցնել A մետաղորսիչ սարքերը

1.5.2 Աշխատեցնել B մետաղորսիչ սարքերը

1.5.2 Պահպանել այդ երկու մետաղորսիչ սարքերը

**Վերապատրաստման խնդիր.**

1.6. Օգտագործել և պահպանել այլ ականագերծող սարքերը, բացի մետաղորսիչներից

**Դասաբաժինների խնդիրներ.**

- 1.6.1 Օգտագործել ականագերծող սարքերը
- 1.6.2 Պահպանել ականագերծող սարքերը

**Վերապատրաստման խնդիր.**

- 1.7. Օգտագործել և պահպանել ժամանակակից VHF հաղորդակցման սարքավորումը

**Դասաբաժինների խնդիրներ.**

- 1.7.1 Աշխատեցնել ժամանակակից VHF հաղորդակցման սարքավորումը
- 1.7.2 Պահպանել ժամանակակից VHF հաղորդակցման սարքավորումը

**Վերապատրաստման խնդիր.**

- 1.8. Իրականացնել ականագերծման գործողություններ

**Դասաբաժինների խնդիրներ.**

- 1.8.1 Իրականացնել ականագերծման գործողություններ

## Հավելված Դ (Տեղեկատվական)

### Դասաբաժնի պլանի օրինակ՝ աշխատեցնել ներկայիս մետաղորսիչ սարքերը

**Վերապատրաստում** Բազային պաշտոնական ականագերծման վերապատրաստում ապագա ականագերծողների համար - 2008թ. փետրվարի 11 – 15  
**Խնդիր** Ապահով աշխատեցնել և պահել ժամանակակից մետաղորսիչ (A և B) սարքերը (տե'ս հավելված Գ 1.5)

**Դասաբաժին** **Ապահով աշխատեցնել մետաղորսիչ սարքեր**  
**Ամսաթիվ** 12 փետրվարի 2008թ.  
**Ժամ** 8.00 – 12.00  
**Վայր** Դասարան և պարապմունքների դաշտ ականագերծման վերապատրաստման կենտրոնում  
**Մասնակիցների թիվ:** 25

Ժամանակ	Դասի մեթոդ	Դասի բովանդակություն	Ուսուցանվող թեմաներ	Սարքեր/աջակցութ., հղումներ
8.00-9.00	Դասախոսությ., քննարկում, հարց և պատասխան	Տեսական դաս մետաղորսիչ սարքերի մեխանիկայի մասին	1. Մետաղորսիչ սարքերի փաթեթավորումը պահեստավորման համար 2. Բնորոշել մետաղորսիչ սարքերի մասերը: Մա ներառում է սերիական համարները: Մերիական համար ունեցող սարքերը միասին պահելու կարևորությունը: Անդրադառնալ մարտկոցների պահպանման ռեժիմին (վերալիցքավորվող մարտկոցներ) կամ փոփոխման ռեժիմին (միանվագ օգտագործման մարտկոցներ): 3. Նախապատրաստություն: Մարտկոցների հավաքում: Անդրադառնալ ականջակալների օգտագործմանը (եթե կա): Հնարավորության դեպքում ցույց տալ ազդանշանների դիապագոնը:	Սարքավորումները. 1. Մետաղորսիչ սարքեր մարտկոցներով և թեստավորմամբ (եթե պահանջվում է): Մեկ սարք ամեն երկու մասնակցի համար:
9.00-10.00	Պրակտիկ ցուցադրում դասարանում	Սկզբում քանդել երկու սարքերն էլ, ցույց տալ նրանց մեխանիկական գործառույթները և մասերը: Հետո խնդրել մասնակիցների հավաքել դրանք	4. Դնել մետաղորսիչ սարքերի զգայունությունը, ձայնի բարձրությունը և փորձարկման պարամետրերն ըստ փորձարկվող հատվածի: Մետաղորսիչ սարքերի նախապատրաստումը գործողությունների համար ըստ արտադրողի ցուցմունքների կամ մանրամասն ԳՍԸ-ներ.	2. Տարածքի նշման սարքեր: Ցցեր, երիզ և մուրճ
10.00-10.30	Մուրճի ընդմիջ.		5. Անդրադառնալ թեստավորման հաճախականությանը, որը պահանջվում է ապահովելու կատարման վստահելիությունը: Պարբերաբար վերակալիբրացում և թեստեր են պահանջվում աշխատանքային օրվա ընթացքում, որը կարող է աշխատանքի ընթացքում էական լինել ջերմաստիճանի բարձր տատանումներ ունեցող տարածքներում: Մա կիրառելի է նաև հողի տարբեր բաղադրություն ունեցող տարածքների համար, թաց կամ չոր և փոփոխվող էլեկտրամագնիսական հաճախականություն ունեցող տարածքներում:	3. Մետաղական պարագաներ մասնակիցների կողմից հայտնաբերվելու նպատակով
10.30-12.00	Պարապմունքների դաշտում մետաղորսիչ սարքերի պրակտիկ	Ցույց տալ՝ ինչպես աշխատեցնել սարքը պրակտիկայում		4. Նյութեր կարդացածը նշելու

<p>ցուցադրում  Մետաղորսիչ սարքերի օգտագործում</p>	<p>Մասնակիցները մաքրում են տարածքը կեղծ ականներից A տիպի մետաղորսիչ սարքի օգնությամբ</p>	<p>6. Որոշել առաջխաղացման տեմպը; բացատրել ուսումնական տարածքի առանձնահատկությունները և թե ինչպես է տարածքի ձևն ու խորությունը տարբերվում ըստ թիրախի</p> <p>6. Մաքրագերծվող տարածքում կատարվող գործողությունը.</p> <ul style="list-style-type: none"> <li>ա. Առաջխաղացման արագությունը (մանավանդ, երբ մետաղորսիչն օգտագործվում է «դինամիկ» եղանակով)</li> <li>բ. Մետաղորսիչի գլխիկի բարձրությունը գետնից</li> <li>գ. Աշխատող մետաղորսիչների միջև մինիմալ տարածքը (այս տարածքը տարբերվում է՝ կախված դետեկտորի մոդելներից, և որոշ մոդելներ կարող են փոփոխել հաճախականությունը՝ խուսափելու միմյանց հակազդելուց):</li> <li>դ. Կածանի՝ իրար համընկնող մասերը</li> <li>ե. Կածանով առաջ շարժվելը (առաջխաղացման արագությունը)</li> <li>զ. Ականի հայտնաբերման դիրքերը՝ կանգնած, պզգած կամ ծնկների վրա</li> </ul> <p>7. Մատնանշելու և նշագծելու ազդանշանները Մասնակիցներին հիշեցնել անվտանգության պահանջների մասին (վերապատրաստման խնդիր 1.1.2)</p>	<p>համար 5. Երկարության չափման պլաստիկ մետր</p> <p>Աջակցություն. Հինգ հրահանգիչ. Տե'ս թեստերի ցուցմունքները անձնակազմի համար</p> <p>Հղումներ</p>
---	--	--	--

	Անվանում	Փաստաթղթի #
<b>Փաստաթղթեր</b>	<p>1. Օպերացիաներ մետաղորսիչով. օպերացիաներ և ծառայության ձեռնարկ և/կամ ԳՄԸ-ների համապատասխան բաժիններ (մետաղի հայտնաբերման ձեռնարկները ուղեցույցեր են և պետք է ադապտացվեն և ընդլայնվեն ըստ պահանջի)</p> <p>2. Գործառնական ԳՄԸ-ներ:</p>	<p>1. մետաղորսիչ սարքերի ձեռնարկ 2. ԳՄԸ</p>
<b>Տեսա-լսողական նյութեր</b>	<p>Power Point պրեզենտացիա մետաղորսիչների մեխանիկայի և դրանց գործածման տեսական մասի վերաբերյալ (ստատիկ/դինամիկ/միացնելի); փնտրող գլխիկի կոնֆիգուրացիա (օղակ/կրկնակի-D); և այն տարածքը, որը գտնվում է մակերեսի տակ և պարունակում է փնտրվող թիրախները (թելադրում է փնտրող գլխիկի առաջխաղացումը):</p>	<p>1. Power Point-ով պրեզենտացիաներ 2. տեսաերիզներ</p>
<b>Այլ անհրաժեշտ նյութեր</b>	<p>Գրատախտակ և կավճամատիտներ</p>	<p>1. աղյուսակներ 2. դիագրամներ</p>
<b>Նշումներ</b>	<p>Մետաղորսիչների ճիշտ օգտագործումը պետք է հսկվի վերապատրաստման պրակտիկ վարժությունների ժամանակ</p>	
<b>Դիտարկումներ</b>		

## Հավելված Ե (Տեղեկատվական) Վերապատրաստման թեստավորման պլանի օրինակ

<b>Վերապատրաստում</b>	Բազային պաշտոնական ականագերծման վերապատրաստում ապագա ականագերծողների համար - 2008թ.փետրվարի 11 – 15
<b>Վերապատրաստման խնդիր</b>	Ապահով աշխատեցնել և պահել ժամանակակից մետաղորսիչ (A և B) սարքերը (տե'ս հավելված Գ 1.5)
<b>Թեստի ամսաթիվ</b>	15 փետրվարի 2008թ.
<b>Դասաբաժնի ժամ</b>	8.00 – 9.00
<b>Վայր</b>	Պարապմունքների դաշտ ականագերծման վերապատրաստման կենտրոնում
<b>Մասնակիցների քանակ</b>	25

Վերապատրաստման խնդիր	Թեստավորման պայմաններ	Արդյունքների ձևակերպում	Նշումներ
Ապահով աշխատեցնել և պահել ժամանակակից մետաղորսիչ (A և B) սարքերը	<p>1. Պրակտիկ թեստի ժամանակ – իրականացնել ականագերծման վարժություններ – սահմանել ռեալ ժամանակ ամեն մասնակցի համար յուրաքանչյուր մետաղորսիչ սարքի համար</p> <p>2. Պետք է հատկացվի.</p> <p>ա. Մետաղորսիչ սարք մարտկոցներով և թեստավորման հարմարանքով (եթե պահանջվում է)</p> <p>բ. Ականագերծման ամբողջական սարքավորումները</p> <p>գ. Մեկ մետր լայնությամբ և տաս մետր երկարությամբ ականագերծման կաճան, որը պարունակում է հինգ մետաղական</p>	<p>1. Ապահով աշխատեցնել երկու ժամանակակից մետաղորսիչներից ամեն մեկը՝ ցուցադրելով հետևյալ ունակությունները.</p> <p><b>Չափանիշներ</b></p> <p>ա. Հավաքել և պատրաստել մետաղորսիչները օպերացիայի համար</p> <p>բ. Միայնակ իրականացնել ականագերծման վարժությունը՝ կաճանում բոլոր հինգ մետաղական օբյեկտները հայտնաբերելու համար:</p> <p>գ. Իրականացնել ազդանշանային հորատման վարժությունը օբյեկտները բացելու համար</p>	<p>1. Ժամանակակից մետաղորսիչների գործառնության հետ կապված պրակտիկ թեստավորումը իրականացվում է միևնույն ժամանակ, ինչ ժամանակակից ականագերծման սարքինը, այն է՝ վերապատրաստման խնդիր 1.6.1. Այս թեստի համար հատկացվում է մեկ ամբողջ օր:</p> <p>2. Վերջնական պրակտիկ թեստ – կատարել ականագերծման վարժություններ:</p>

	<p>թիրախներ (պատշաճ ստիմուլյանտներ կամ FFE ականներ կեղծ դետոնատորներով):</p> <p>d. Ոչ ավել, քան ամեն մետաղորսիչի համար հատկացված ժամանակը</p> <p>3. Առանց ցուցմունքներն օգտագործելու</p> <p>4. Առանց օգնության</p>	<p>դ. Նշել վայրը, եթե ական կամ մետաղական ազդանշան է հայտնաբերվել:</p> <p>ե. Աշխատեցնել մետաղորսիչներից յուրաքանչյուրը՝ առանց անվտանգության կանոնները խախտելու:</p>	
--	--	--	--

## Փոփոխությունների արձանագրություն

### ՀԱԳՄՉ-երի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրություններ: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ